

ՎԱՍԻՍՅԱՆ. Հենրիխ Պետալօցցի. նրա կեանքը, գործունեությունը և հեղինակությունները. Թ. 1896:

Ահա մի գրքով, որ շնայելով իւր օգտակար նիւթին և «պ. Խ. Յարութիւնեանցի բարեկամական խորհրդով» հրատարակուած լինելուն, կարող էր կազմողի (Թարգմանողի) գրասեղանի արկղումը մնալ երկար ժամանակ՝ մինչև նրա ռուսերէն և հայերէն լեզուներին աւելի լաւ ծանօթանալը, և այդ բանի համար հայոց լեզուի ու գրականութեան բարեկամները նորանից կարծեմ չէին նեղանալ. Իբրև նմուշ աշխատասիրողի հմուտութեան բաւական են հետեւեալ նախադասութիւնները, որ յատկապէս յառաջ ենք բերում այն պատճառով, որ դոցա մէջ հայերէն բառերի կողքին, փակագծերի մէջ, յառաջ են բերուած ռուսերէններն էլ. «... մանաւանդ սկզբում պէտք է առարկային աւելի գիտողութիւն (наглядность) տալ» (?), «մարդու զգայական (чувственной восприимчивости) կազմութիւնը», «վառելիք (пичека) աշակերտները (?) ճշմարտութիւնների զանազան փըշրանքներով» (?) գլխաւոր կէտ — исходная точка, դատողաբար — толково, կատարման կէտ — точка отправления են. Այս օրինակներից պարզ երևում է, որ պ. Վաչագանի բառարանը միանգամայն տարբեր է այն բառարաններից, որ գործ են ածում սովորական մահկանացուները, Պարոնի մտածելու եղանակն էլ սովորականից տարբերուում է. օր. ո՞վ կարող է հասկանալ հետեւեալ տողերը. «Այն գիտութիւնների կարգում, որոնք գործնական տեղեկութիւն չեն կազմում, գտնուում է տեղեկութիւնը, գործնական յարմարութիւնը (?) (приложение), որ դարձեալ էապէս կարևոր են լիակատար կրթութեան համար»:

Եւ սակայն Վաչագան պարոնը սպառնում է հայոց գրականութիւնն հեղեղելու, ուրիշ horrible dictu! տասն և մէկ՝ գիտութեան և գրականութեան բոլոր ճիւղերին պատկանող գրուածքներով, որոնց ցանկն էլ վաղօրօք յայտնում է ի գիտութիւն հայ ազգի:

Ն ա պ ա ս տ ա կ, Ս ի լ վ ի ս կ ու ց. — Թարգմ. օր. Ն. Ղուկիջանեանց Հրատ. Թ. 4. Ընկ. № 109. Թ. 1896:

Իւր. Ե ա կ շ ի ց. Ծ եր ու ն ի Մ ար կ օ ն. — Թարգմանեց Յ. Մեղնիկեան. Նոյն № 110. Թ. 1896:

Այս տետրակներից առաջինը մի հետաքրքրական պատմութիւն է մանկական ընթերցանութեան համար. ափսոս որ Թարգմանութեան լեզուն փոքր ինչ անմշակ է:

Երկրորդը Հրատ. Ընկ. վերջին տպագրութեանց թուում աչքի է ընկնում իւր արժանաւորութիւններովը, որպէս մի շատ օգտակար գիրք ժողովրդական ընթերցանութեան համար. Թարգմանութեան լեզուն մեր նոր հեղինակների ու Թարգմանիչների սովորական պակասութիւններն ունենալով հանդերձ, այն է՝ ռուսերէնի չափազանց մեծ ազդեցութեան հետքերը, բաւականին կոկ է այնու ամենայնիւ և լաւ է կարդացուում:

Առաջին տետրակի գինն է 7 կոպ., երկրորդին՝ 10 կոպ.:

Ղ օ ն ա Ղ լ ու Ղ ս մ ն ա ց, Վ օ դ լ վ ի լ մ է կ ար ա ռ ու ա ծ ո վ. Յովակիմ Սօլովեանի. Մոսկուա. 1896:

Այս մի անհամ գրուածք է, որի տպագրութեան խորհուրդը ոչ դրի հասկանալի լինել չէ կարող, բացի Թերևս հեղինակից, 2 կայ սրամտութիւն, որ անհրաժեշտ է մի վօդըվիլի համար, չկայ և մի հետաքրքրական կենսական երևոյթ բովանդակութեան մէջ. այստեղ շօշափուած խնդիրը (կանանց անմիտ զուարճասիրութիւնն ու շռայլութիւնը, այրերի դժգոհութիւնը) վաղուց ծանօթ է մեր գրականութեան մէջ և այն արժանաւոր հեղինակութեանց շնորհիւ:

2.

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՔԵՐ.

- 1) Սպարտակ. պատմական վէպ. Թագմ. Ս. Հովսեանի, Բագու. 1896, տպ. «Արօր»:
- 2) Նոր ժողովածու Գ. Պրակ, միջնադարեան Հ. առղեր և ոտանաւոր. Կ. Կոստանեանց. Թիֆլիզ. 1896:
- 3) Ազգագրական Հանդէս, կիսամեայ պատկերազարդ, Ա. տարի. Ա. Դիրք. 1896 Շուշի. Լեւրմոնտով. Մծիրի. Թարգմ. Յով. Թումանեանցի. 1896. տպ. Յ. Մարտ. Թիֆլիզ:
- 4) Դաշնակներ (փոփոխած) Յով. Թումանեանցի. 1896. Թիֆլիզ. տե. Յ. Մարտ:
- 5) Սոխակ Հայաստանի. Ազգային լիակատար երգարան. Հրատ. Դրիգոր ք. Դրիգորեանց Գ. տպ. Մոսկ. տպ. Բ. Բարխուդարեանի. 1896: